ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/9217-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-180-02.03.2022-ՖՎ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մարտի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 298 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-180-02.03.2022-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Շահումով խաղերի, ինտերնետ խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ նախագծեր) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծերով անհրաժեշտ է նախատեսել, որ «խաղերի խաղացողը խաղին մասնակցության համար կարող է օգտվել միայն իր բանկային հաշիվներից՝ բացառելով այլ վճարահաշվարկային համակարգերից օգտվելու հնարավորությունը», այսինքն՝ թույլատրել միայն բանկային հաշիվներով խաղադրույքների կատարումը՝ արգելելով անգամ էլեկտրոնային դրամապանակների միջոցով խաղադրույքներ անելը, և միակ բացառությունը կարող է սահմանվել խաղատան խաղադրույքների համար, այն էլ ոչ ռեզիդենտ քաղաքացիների համար:

2. «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքով արդեն իսկ նախատեսված է «անկանխիկ ձևով գործառնություն (վճարում)» հասկացությունը, ուստի առաջարկում ենք «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերից հանել հիշյալ հասկացությանը վերաբերող դրույթները:

3. «Շահումով խաղերի, ինտերնետ խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածով խմբագրվող 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Շախմատ, շաշկի, նարդի, տիր, բիլիարդ և նմանատիպ սպորտային բնույթի խաղերը շահումով խաղ չեն հանդիսանում, բացառությամբ թղթախաղերի տեսակների: Սույն մասում նախատեսված խաղերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենսդրությամբ:»: Այս կապակցությամբ առաջարկում ենք հանել նշված կարգավորումը,

քանի որ գործող որևէ իրավական ակտով այս խաղերի հետ կապված հարաբերությունները կարգավորող հատուկ դրույթներ նախատեսված չեն, իսկ ներկայացված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով նշված խաղերի վերաբերյալ նախատեսվում է ընդամենը մեկ դրույթ՝ կապված շահումը վճարելու եղանակի հետ.

2) 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է, որ էլեկտրոնային փողին վերաբերող կարգավորումները գործում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիս ժամկետով: Այս առումով պարզ չէ, թե ինչով է պայմանավորված նախագծում էլեկտրոնային փողին առկա միջոցներով գործարքներ իրականացնելու հնարավորությունը 6-ամսյա ժամկետի նախատեսումը:

4. «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածով խմբագրվող 5-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ օրենքով արդեն իսկ նախատեսվում է շահումը տրամադրելու ձևը.

2) 2-րդ հոդվածով խմբագրվող 5.2-րդ հոդվածի 2-րդ մասի «և (կամ)» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կամ» բառով.

3) 2-րդ հոդվածն ամբողջությամբ չի կարգավորում խաղացողների կողմից կանխիկ եղանակով կատարվող խաղադրույքները՝ օրինակ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի մասնակիցները նույնականացում անց-նելուց հետո խաղի ընթացքում կարող են կանխիկ եղանակով պարբերաբար կատարել խաղադրույքներ, որի համար կազմակերպչի կողմից տրամադրվում է տոմս, որտեղ նշվում են իրադարձության կայացման ժամը, ելքի կանխագուշակման գործակիցը, խաղացողի կողմից կատարված խաղադրույքի չափը և հնարավոր շահումը, սակայն տոմսը չի արտացոլում խաղացողի վերաբերյալ տվյալները, ինչի արդյունքում ռիսկեր են առաջանում կանխիկ եղանակով կատարվող խաղադրույքների ֆինանսական հետագծելիության անհնարինության և ստվերի ձևավորման համար:

Կազմակերպիչների կողմից կանխիկ եղանակով խաղադրույքների ընդունումը բացառելու նպատակով առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածում սահմանել նաև դրույթ՝ «անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից կատարվող խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է բանկային հաշվով և (կամ) վճարային քարտով, և (կամ) էլեկտրոնային փողի հաշվով՝ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարմամբ» բովանդակությամբ:

Միաժամանակ առաջարկում ենք նմանատիպ կարգավորում կատարել նաև «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում:

5. Կարևորում ենք հիմնավորման համապատասխանեցումը կարգավորման նպատակի և նախագծերի ընդունման անհրաժեշտության հետ: Մասնավորապես, հիմնավորման համաձայն՝ «Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է խաղային բնագավառում ապահովել առավելագույն թափանցիկություն, պաշտպանել սոցիալապես անապահով խավերի շահերը և խաղամոլությամբ տարված մարդկանց համար

խաղադրույք կատարելու լրացուցիչ խոչընդոտներ սահմանել՝ խաղալու համար: Կարևոր է նաև հասարակության խոցելի խմբերը մոլեխաղերով հրապուրվելու վտանգից զերծ պահելը, հաշվի առնելով բնակչության սոցիալական վիճակը և մոլեխաղերով հրապուրված անձանց կողմից իրենց և իրենց ընտանիքներին նյութական ծանր դրության հասցնելու հաճախ հանդիպող իրողու-թյունը, ինչը հնարավոր կլինի պետության համար այլ գործիքներ հնարավոր դարձնելով այս նախաձեռնությամբ ապահովվող թափանցիկության պարագայում:»:

Սակայն նախագծերով առաջարկվող կարգավորումները վերաբերում են տոտալի-զատորների, շահումով խաղերի կազմակերպիչների և նմանատիպ այն սուբյեկտների հաշիվներին կանխիկ եղանակով դրամական միջոցների մուտքագրման արգելմանը, և վերը նշված խոցելի խմբերին մոլեխաղերով հրապուրվելու վտանգից զերծ պահելուն, խաղադրույքների կամ խաղերին մասնակցության սահմանափակումներ կիրառելու մասով որևէ կարգավորում նախատեսված չէ: Այս առումով հարկ է նշել, որ օրենքի ընդունումից հետո պետք է ընդունվեն նաև շահումով խաղերից օգտվելիս սահմանափակումներ կիրառելու վերաբերյալ օրենսդրական ակտեր:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծերի կարգավորումներն անհրաժեշտ է խմբագրել՝ միաժամանակ հիմնավորումը համապատասխանեցնելով նախագծերով առաջարկվող կարգավորումների բովանդակությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 298 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Հայրապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-180-02.03.2022-ՖՎ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.03.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-180-02.03.2022-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Շախմատ, շաշկի, նարդի, տիր, բիլիարդ եւ նմանատիպ սպորտային բնույթի խաղերը շահումով խաղ չեն հանդիսանում, բացառությամբ թղթախաղերի տեսակների: Սույն մասում նախատեսված խաղերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենսդրությամբ:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի է) կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«է) ապահովում է խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն կանխիկ հայկական դրամով, կամ անկանխիկ եղանակով՝ բանկային հաշվին եւ (կամ) էլեկտրոնային փողի հաշվին առկա միջոցներով: Ընդ որում, անկանխիկ եղանակով նախաձեռնած փոխանցում (վճարում) է համարվում կազմակերպչի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվին կատարված վճարումը (փոխանցումը)»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 2.1 մասի զ1) եւ զ2) կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«զ1) շահումը անկանխիկ ձեւով փոխանցում (վճարում) է հայկական դրամով՝ փոխանցելով խաղացողի բանկային հաշվին կամ բանկային քարտին կամ էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում, շահումը անկանխիկ ձեւով փոխանցում (վճարում է) համարվում կազմակերպչի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը).»,

«զ2) արգելվում է շահումը փոխանցել (վճարել) այն բանկային, քարտային եւ/կամ էլեկտրոնային փողի հաշիվներին, որոնցից չեն կատարվել մասնակցության համար նախատեսված անկանխիկ վճարները, ինչպես նաեւ արգելվում է անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում մասնակցության համար նախատեսված վճարների ընդունումը եւ շահումների տրամադրումը կանխիկ գումարով.»:

Հոդված 4. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով սահմանված էլեկտրոնային փողին վերաբերվող կարգավորումները գործում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիս ժամկետով:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-180[1]-02.03.2022-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի զ) կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«զ) շահողի առաջին իսկ պահանջով տրամադրում է շահումը՝ օրենքով սահմանված ձեւով.»:

Հոդված 2. Օրենքի 5.2.-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2.Արգելվում է տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել եւ ելքագրել կանխիկ եղանակով: Նշված հաշիվները համալրվում են, եւ հաշիվներից գումարը կանխիկացվում է միայն բանկային հաշվով եւ (կամ) վճարային քարտով եւ (կամ) էլեկտրոնային փողի հաշվով՝ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարմամբ: Ընդ որում, անկանխիկ եղանակով նախաձեռնած փոխանցում (վճարում) է համարվում վիճակախաղի կազմակերպչի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվին կատարված վճարումը (փոխանցումը):»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված էլեկտրոնային փողին վերաբերող կարգավորումները գործում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիս ժամկետով:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-180[2]-02.03.2022-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1040-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Վիճակախաղ, տոտալիզատոր կամ այլ խաղեր, այդ թվում՝ շախմատ, շաշկի, նարդի, տիր, բիլիարդ եւ նմանատիպ բնույթի խաղերի անցկացնելու կանոններին համապատասխան խաղի կազմակերպիչը շահած անձանց պետք է վճարի նրանց շահումը՝ խաղեր անցկացնելու կանոններով նախատեսված չափով, ձեւով (անկանխիկ եղանակով՝ փոխանցելով խաղացողի բանկային հաշվին կամ բանկային քարտին կամ էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում, անկանխիկ եղանակով նախաձեռնած փոխանցում (վճարում) է համարվում կազմակերպչի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը) կամ բնեղենով) եւ ժամկետում, իսկ եթե այդ կանոններում ժամկետը նշված չէ, ապա խաղերի արդյունքները որոշելու պահից ոչ ուշ, քան տասն օրում:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքով սահմանված էլեկտրոնային փողին վերաբերող կարգավորումները գործում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիս ժամկետով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը , իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Այսօր հասարակության մի զգալի զանգված ,անկախ սոցիալական կարգավիճակից սկսել է օգտվել; շահումով խաղերից, որոնց մեջ մեծ չափաբաժին ունեն համացանցի միջոցով իրականացվող շահումով խաղերը: վերոնշյալի հետ կապված , հատկապես սոցիալական խավերի մոտ , սոցիալական խնդիրները ավելի են սրվում:

Մասնավորապես, եթե 2018թ. խաղացողների կողմից գնվել է 333 մլրդ դրամի միավոր խաղ, ապա 2019 թ. այդ գումարը ավելացել է ավելի քան 3.3 անգամ՝ հասնելով 1.115 մլրդ դրամի, իսկ 2020թ. միայն առաջին 10 ամիսներին այս թիվը արդեն հասել էր 1.548 մլրդ դրամի: Ըստ որոշ գնահատականների՝ 2021թ.-ին այս թիվը գերազանցել է 2 տրիլիոն դրամը: Ավելացել է նաեւ խաղացողների թիվը, 2018-ից 2020թ, բարձրանալով գրեթե 2.5 անգամ՝ 18093-ից հասնելով 44082-ի: Այսինքն՝ 2020թ-ին, 2018թ-ի համեմատ, կազմակերպիչների կողմից գեներացված գումարները առնվազն հնգապատկվել են՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 32%-ը: Այսօր արդեն այս ցուցանիշը ավելի է մեծացել եւ մեր գնահատմամբ տնտեսական եւ ընդհուպ մինչեւ անվտանգության խնդիրներ է պարունակում: Ընդ որում, մեր գնահատմամբ, կանխիկով՝ առանց որեւէ սահմանապակման եւ վերահսկողության ըստ էության անսահմանափակ խաղադրույքներ անելու հնարավորությունը խթան է հանդիսանում անձանց նման վարքագցի եւ հանգեցնում նման շեշտակի աճի: Կարծում ենք նաեւ, որ շահումով խաղերի հանրային օգուտը շատ ավելի քիչ է, քան այն հանրային վնասը, որը հասցվում է ՝ հատկապես սոցիալական ոչ ապահով խավին: Բացառապես անկանխիկ խաղադրույքների իրականացումը կապահովի մի շատ կարեւոր խնդրի լուծում՝ կբարձացնի թափանցիկությունը եւ այդ պարագայում հնարավոր կլինի, որ պետութունը այլ գործիքներով եւս հետեւի ոլորտում խաղացողների վարքագծին, ոլորտի իրական շրջանառությանը: Կլուծվի մի շատ կարեւոր խնդիր. պետության եւ հասարակության առջեւ ֆինանսական պարտավորություններ ունեցող, դրանք կատարել չկարողացող, սոցիալական ծանր վիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների՝ շահումով խաղերին մասնակցելը, էապես կնվազի, քանի որ կանխիկով եւ «պարտքով» խաղալը էապես բարդանալու է: Կարեւոր ենք համարում նաեւ օրենքի ուժի մեջ մտնելուց 6 ամիս հետո ուժի մեջ մտնող կարգավորումը, որը արգելում է էլեկտրոնային դրամապանակների միջոցով խաղադրույքներ անելը կամ բուքմեյքերական հաշիվներ լուծելը, ինչը հնարավորություն կտա բացահայտել խաղադրույքների կատարման ամբողջական շղթան, եւ հետագայում առավել ճշգրիտ եւ հասցեական խաղամոլության դեմ պայքարի քաղաքականություն իրականացնել:

Այս նախաձեռնության միջոցով հնարավոր կլինի նաեւ բացահայտել ոլորտի իրական շրջանառությունը եւ անհրաժեշտության պարագայում հիմնավորված կերպով անցնել ավելի արդար հարկման համակարգի: Հատկանշական է, որ զուգահեռ ՀՀ-ում զարգանում է անկանխիկ վճարումների մշակույթը եւ անկանխիկ գործառնությունների անխափան, պարզ եւ արագ իրականացման համար պետությունը իրականացնում է անհրաժեշտ օրենսդրական,

ենթակառուցվածքային եւ կրթական գործողությունները, հետեւաբար որեւէ կերպ չի սահմանափակվում մարդու՝ ֆինանսական միջոցները տնօրինելու հնարավորությունը:

Ոստի այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում եւս մեկ սահմանափակվող եւ թափանցիկությունը բարձրացնող կարգավորման հնարավորություն ունենալը: Կարեւոր փոփոխություն է նաեւ այն, որ քաղաքացիները իրենց շահումները կարող են ստանալ բացառապես միայն անկանխիկ եղանակով , ինչը եւս կնպաստի հասարակության տարբեր շերտերի մոտ անկանխիկ գործառնությունների մշակույթի ձեւակերպման:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը:

Առաջարկվող կարգավորմամբ արգելվում է տոտալիզատորի , շահումով խաղերի կազմակերպիչների եւ նմանատիպ այլ սուբյեկտների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել եւ ելքագրել կանխիկ եղանակով , իսկ 6 ամիս հետո ուժի մեջ մտնող կարգավորմամբ բուքմեյքերական հաշիվների լիցքավորումը հնարավոր է լինելու բացառապես բանկային հաշիվների միջոցով: Ընդ որում անկանխիկ մուտքագրում է համարվում այն դեպքը , երբ փողը մուտքագրվում է վիճակախաղի կամ շահումով խաղի կազմակերպչի բանկային հաշվին : Նշենք նաեւ , որ շահումը պետք է փոխանցվի այն հաշվին ,որից կատարվել է գումարի մուտքագրումը՝ խաղալու նպատակով: Կարգավոումը բխում է պետության կողմից իրականացվող անկանխիկ դրամաշրջանառության զարգացման եւ խաղամոլության դեմ պայքարի քաղաքականություններից:

3.Ակնկալվող արդյունքը:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է խաղային բնագավառում ապահովել առավելագույն թափանցիկություն, պաշտպանել սոցիալապես անապահով խավերի շահերը եւ խաղամոլությամբ տարված մարդկանց համար խաղադրույք կատարելու լրացուցիչ խոչընդոտներ սահմանել՝խաղալու համար: Կարեւոր է նաեւ հասարակության խոցելի խմբերը մոլեխաղերով հրապուրվելու վտանգից զերծ պահելը, հաշվի առնելով բնակչության սոցիալական վիճակը եւ մոլեխաղերով հրապուրված անձանց կողմից իրենց եւ իրենց ընտանիքներին նյութական ծանր դրության հասցնելու հաճախ հանդիպող իրողությունը, ինչը հնարավոր կլինի պետության համար այլ գործիքներ հնարավոր դարձնելով այս նախաձեռնությամբ ապահովվող թափանցիկության պարագայում: Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կարգավորել եւ ապահովվել օրենքով սահմանված պահանջների հետ կապված հարաբերությունները: